

ՀԻՄՆԱԿՈՐՈՒՄ

«ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄՄԱՆ

Ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների Երևան քաղաքում 2018թ. դրությամբ առկա է գերեթե 200 հազար ավտոմեքենա, որոնք գրեթե ամբողջությամբ շահագործվու են բենզին, գազ կամ դիզելային վառելանյութերով: Աղյուսակ 1-ում ներկայացված են մանրամասները:

Աղյուսակ 1. Տրանսպորտային միջոցների բաշխվածությունը ըստ օգտագործվող վառելանյութի տեսակի¹

Տրանսպորտային միջոցի տեսակ	Քանակ	Բենզինով աշխատող	Դիզելով աշխատող	Գազով աշխատող	Տարեկան միջին վազքը
Մարդատար	197000	20%	10%	70%	13000 կմ
Միկրոավտոբուս և ավտոբուս	1976	0%	17%	83%	50000 կմ
Տրոլոյբուս	50	0%	0%	0%	65000 կմ

Հատկանշական է, որ 2019թ.-ին ՀՀ են ներմուծվել շատ մեծ քանակի ավտոմեքենաներ, ուստի վստահաբար կարելի է պնդել, որ այս թիվը ներկայումս շատ ավելին է քան 200 հազարը:

Աղյուսակ 2-ում ներկայացված է, թե Երևան քաղաքում 2018թ.-ին որքան տոննա մթնոլորտն աղտոտող նյութ է արտանետվել շրջակա միջավայր՝ տրանսպորտային միջոցներից²:

Աղյուսակ 2: Երևան քաղաքում տրանսպորտային միջոցներից արտանետված մթնոլորտն աղտոտող նյութերը տոննաներով:

Տրանսպորտային միջոցի տեսակ	SO ₂	NO _x	PM _{2.5}
Մարդատար	25	542	26
Միկրոավտոբուս և ավտոբուս	2	804	3
Տրոլոյբուս	0	0	0


¹ Ասիական Ջարգացման Բանկի կողմից իրականացված էլ. շարժունակության ռազմավարական մոտեցումների մասին հետազոտություն:

² Նույն տեղում


Ընդհանուր	27	1346	29
Աղտոտման արժեքը մլն դոլար	0.1	1	2.7

Արտանետումների տնտեսական արժեքի արագ գնահատումը կատարված է ԱՄՀ-ի (Արժույթի միջազգային Հիմնադրամ) կողմից³:

Ելնելով ՀՔ-ի ՀՀ-ի համար ՀՆԱ-ի միջին 3,8% աճի կանխատեսումից, ինչպես նաև համապատասխան ուղևորափոխադրումների և բեռնափոխադրումների զուգահեռ աճից, կանխատեսվում է, որ մինչև 2030 թվականը տրանսպորտից արտանետումները կաճեն մոտ 50%-ով:



Հաջորդ գծապատկերում ներկայացված է կանխատեսումը, թե որքան կաճի էլեկտրական շարժիչով մեքենաների կողմից էլեկտրոէներգիայի սպառումը:



Կարևոր ենք համարում նաև ապագայում սկզբում Երևան, ապա նաև Հանրապետության մյուս քաղաքներում էլեկտրական ավտոբուսների զանգվածային ներդնումը: Հատկանշական է, որ հաշվարկները ցույց են տալիս, թե տնտեսապես

³ Արժույթի միջազգային հիմնադրամի հաշվետվություն, 2014թ.

որքան նպատակահարմար է դրանց ներդրումը: Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են մանրամասները:

Հիմնական տեխնիկական չափորոշիչների համեմատություն

Չափորոշիչներ	Միջին չափի ավտոբուս	Մեծ ավտոբուս	Կցորդիչով ավտոբուս	Աղբյուրը
Տարեկան վազքը կմ	60000	60000	66000	WYG, 2019
Ավտոբուսի շահագործման տևողությունը ըստ տարիների	10	16	16	WYG, 2019
Դիզելային շարժիչով ավտոբուսի ծախսը L/100կմ	33	38	57	WYG, 2019
Բնական սեղմված գազով ավտոբուսի ծախսը կգ/100կմ	31	44	59	BRT Medelline
Էլեկտրական շարժիչով ավտոբուսի ծախսը կվտ/ժ/կմ	0,8	1,1	2,2	Հիմք է ընդունվել ՉժՀ-ի և շվեդական փորձը

Ֆինանսական չափորոշիչներ

Չափորոշիչներ	Արժեքը	Աղբյուրը
Դիզելի արժեքը	0.93 ԱՄՆ/լիտր	WYG, 2019
ՍՊԳ-ի արժեքը	0.33 ԱՄՆ/կգ	WYG, 2019
Էլեկտրաէներգիայի արժեքը դանդաղ լիցքավորվող էլ. ավտոբուսների համար	0.07 ԱՄՆ/կվտ	Գիշերային սակագինը ոչ ավել քան 10 կվ - համար
Էլեկտրաէներգիայի արժեքը արագ լիցքավորվող էլ. ավտոբուսների համար	0.08 ԱՄՆ/կվտ	Օրվա ընթացքում գանձված էլեկտրաէներգիայի մասնաբաժնի և գիշերային սակագնի հիման վրա
Մարտկոցի աշխատանքի տևողությունը	8 տարի	Արտադրողների երաշխիք 80% SOC
Մարտկոցի կանխատեսվող գինը 2027թ.	120 ԱՄՆ/կվտ	US DOE կանխատեսում
50-80 կվտ հզորությամբ	10.000 ԱՄՆ	ՉժՀ-ի մատակարարների

Երկու վարդակով լիցքավորիչի արժեքը		առաջարկների հիման վրա
300-400 կվտ հզորությամբ երկու վարդակով լիցքավորիչի արժեքը	100.000 ԱՄԴ	ՉԺՀ-ի մատակարարների առաջարկների հիման վրա
Իրական տոկոսադրույքը ավտոբուսի համար	5%	
Իրական տոկոսադրույքը էլ. ավտոբուսի համար	2.3%	50% GCF - 1,25% եվ 50% ADB - 3%

Նշենք, որ այս պատկերը վստահաբար կարող ենք պրոեկտել նաև ողջ ՀՀ համար, այսինքն ամբողջ երկրի համար նույնպես կստացվի նմանատիպ պատկեր:

Ամփոփելով նշենք, որ ներկայացված նախագիծը հնարավորություն կտա կարճաժամկետ հատվածում սահմանել արտոնյալ պայմաններ էլեկտրոմոբիլների համար, ինչը կհանգեցնի նրան, որ բնակչությունը կսկսի ավելի շատ գնել կամ ներմուծել էլեկտրական շարժիչով մեքենաներ, ինչն էլ կհանգեցնի ՀՀ էներգետիկ անկախության բարձրացմանը, շրջակա միջավայրի աղտոտվածության մակարդակի իջեցմանը, բնակչության ծախսերի կրճատմանը, այս ոլորտում նոր ներդրումների ավելացմանը և այլ դրական արդյունքների: